ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«26» 06 2024 թ.
№ ՄԱԱՊՁԲ-24-4-987

«ՅՈՒՆԻՍՊԵՑԹԵՔ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 02274272)
տնօրեն՝ Է. Գալստյանին
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Լուսինյանց 5/2
հեռ.+37493 66 77 75
էլ. հասցե՝unispectech777@gmail.com

ՇՏԿՎԱԾ

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՅՈՒՆԻՍՊԵՑԹԵՔ» ՍՊ ընկերության միջև 22.09.2023թ. կնքված N ՄԱԱՊՁԲ-23-4-15 գնման պայմանագրի (համաձայնագիր №1 առ 19.10.2023թ.) (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2023թ.-ի IV-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2023թ., պետք է մատակարարեր Պայմանագրի 11-րդ չափաբաժնով նախատեսված 3 հատ ապրանքներն ամբողջությամբ և 12-րդ չափաբաժնով նախատեսված 10 հատ ապրանքներից 7 հատ: Սակայն 05.06.2024թ. դրությամբ, «ՅՈՒՆԻՍՊԵՑԹԵՔ» ՍՊԸ-ի կողմից վերոնշյալ քանակները ընդհանրապես չեն մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, 2024թ. հունիսի 19-ին, Պայմանագրի 11-րդ չափաբաժինը լուծել է միակողմանի ամբողջությամբ, իսկ 12-րդ չափաբաժինը՝ միակողմանի մասնակի:

Տեղեկացնում եմ, որ ««ՅՈՒՆԻՍՊԵՑԹԵՔ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո, 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 620 131 ՀՀ դրամ՝ որպես տույժ, Պայմանագրի 6.2 կետի համաձայն և 51 435 ՀՀ դրամ՝ որպես տուգանք, Պայմանագրի 6.3 կետի համաձայն:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am